ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2022 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշման պահանջների՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող 79.65հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություններ՝ ցածրարժեքից-բարձրարժեքի՝ Արենի համայնքում 48.6հա (արոտը և այլ հողատեսքը), Եղեգնաձոր համայնքում 29.05հա, Վայք համայնքում 3.0հա, Ջերմուկի համայնքում 5.0հա փոխադրվել և անցել են բազմամյա տնկարքների տակ, Եղեգիսի համայնքում 2.2հա արոտը փոխադրվել է խոտհարքի՝ հետագայում պտղատու այգի հիմնելու նպատակով:

Որոշման կարգի համաձայն կատարել ենք նաև բարձրարժեքից–ցածրարժեք հողատեսքերի փոփոխություններ՝ Արենի համայնքից՝ Ելփինի բնակավայրի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 9.2505հա ջրովի վարելահողերը, Աղավնաձոր և Չիվա բնակավայրի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 1.317հա պտղատու այգիները, Արենի բնակավայրից համայնքային սեփականություն հանդիսացող 0.48962հա խաղողի այգին և Աղավնաձորի բնակավայրից իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0.13797հա վարելահողը փոխադրվել են ցածրարժեք հողատեսքերի՝ անջրդի ու ջրովի վարելահողերի և խոտհարքների, իսկ Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 1.1հա վարելահողը փոխադրվել է խոտհարքի: Նշված փոփոխությունները կարծածվեն մարզի 2022 թվականի ամփոփ հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ենք ներկայացրել, համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման

ժամանակավոր սխեմաներում, հողերի նպատակային նշանակության փոփոխության 5 առաջարկություն, որից 2-ին հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, որն էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքներ, իսկ 3-ը ընթացքի մեջ է:

Աշխատանքներ են տարվել համայնքի ղեկավարների հետ 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հողային հաշվեկշռի նախնական տարբերակը քննարկելու և այն վերջնական տեսքով ներկայացնելու ՀՀ կադաստրի կոմիտե մինչև օգոստոսի 1-ը:

Ուսումնասիրվել և օրինականություններն են ստուգվել հողային հարաբերությունների բնագավառում համայնքների կողմից ընդունված համայնքի ղեկավարի և ավագանու որոշումները:

Հետևողական ենք եղել համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալության տրամադրման աշխատանքները իրականացվեն ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը հուլիսի 2022թ օտարվել է 53.6հա, 45.0 մլն. դրամ գումարով, վարձակալական հիմունքներով օգտագործման է տրամադրվել 4254.0 հա, որի համար կնքվել են 12 վարձակալական պայմանագրեր: Բաժինն ստացել է 5 քաղաքացիներից դիմումներ, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք ենք տվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ Մ. Մեսրոպյան